



IT
II
9

154



ՍՈՍԻՏԱՍ



ասատուր Ծուրցումեանր

«Հայաստան»
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ • 1969

Ар I
4—68

Կազմող և խմբագիր՝
Լ. Վ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ
Նկարիչ՝
ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ
Ս. Շ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

КОМИТАС
СТИХИ

7-4-3
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1969

ԿՈՄԻՏԱՍԸ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Հանճարեղ երգաստեղծ Կոմիտասը հեղինակ է նաև մի քանի տասնյակ բանաստեղծություններու։ Դրանք նրա կենդանության օրոք չեն տպագրվել. պարզապես հեղինակն իրեն չի համարել կոչումնավոր բանաստեղծ և գրել է ինքն իր համար։ Երբեմն միայն՝ ամենամտերիմներից մեկի albomում թողել է որևէ չափածո հիշատակ։ Ու երևի երբեք էլ չի խորհել, թե իր բանաստեղծությունները մի օր կարող են դառնալ հասարակության ուշադրության առարկա։

Այդ բանաստեղծությունները, որոնց գրվելու ժամանակից անցել է ավելի քան կես դար, այսօր մեզ համար թանկ են ո՛չ միայն իրրև կոմիտասյան մասունքներ։ Դրանք ճշմարիտ գրական ստեղծագործություններ են, որոնք, եթե չունեն հեղինակի հրաշագործած մեղեդիների մշտանորոգ փայլը, այնուամենայնիվ ունեն նրա աստվածային էության, նրա մտքի և հոգու դրոշմը։ Կոմիտասի բանաստեղծությունները (որոնց մի մասը դուցե նաև պիտի ձայնագրվեր) մեր առջև պարզում են հեղինակի գրական-գեղագիտական ըմբռնումները,

անձնական մտորումները։ Ուստի հետաքրքրական և արժեքավոր են նաև Կոմիտաս-արվեստագետի և Կոմիտաս-մարդու նկարագրի ամբողջականացման տեսակետից։

Սովորաբար ասում են, թե երաժշտությունն ու պոեզիան արտահայտում են մարդու հույզերն ու ապրումները, հանրության, ժողովրդի տրամադրություններն ու նկրտումները։ Կոմիտասի երաժշտության համար նման բնորոշումը հույժ թերի կլիներ, որովհետև կոմիտասյան մեղեդիների մեջ ցոլանում է մեր ժողովրդի ոչ միայն զգացական աշխարհը, այլև ամբողջ պատմությունը, հոգեբանությունը, ոգին։ Ոչ մի գիրք, ոչ մի կտավ չեն կարող արտահայտել մեր ազգային նկարագիրն այնքան հարազատորեն և այնպես ճիշտ, ինչպես անում են այն զարմանալի երգերը, որ մի բառով կոչվում են կոմիտասյան։ Այդ երգերի մեջ մեր անցած ճանապարհն է՝ դողթան մեղեդիներից մինչև քրիստոնեություն, 5-րդ դարի սահակ-մեսրոպյան նախաստեղծ շարականներից մինչև նարեկյան կես-հեթանոս, կես-հոգևոր և ամբողջության մեջ անզուգականորեն հուրթի տաղերը, որ գորացած են Արծրունյաց պետականության հզորությամբ ու խաղաղված ժողովրդի լավատեսությամբ, ապա միջնադարյան ամբողջ ալեկոծումներն ու տվայտանքները՝ պետականության կորուստ, պատերազմներ, գաղթ ու սրածություն, ավեր ու պանդխտություն, մինչև 19-րդ դարի և 20-րդի սկզբի ազգային-ազատագրական պայքարի հերոսական

տարեգրությունը։ Հազարամյակներ ապրող մեր ժողովրդի մեղեդիացած պատմությունը, նրա անցած ճանապարհի ոգիացած կենսափիլիսոփայությունն են այն անսպառելի, անհատնելի, անխամրելի հարստությունն ու հմայքը, ուժն ու էությունը, որ ունի կոմիտասյան երգը։

Համեմատաբար համեստ է կոմիտասյան բանաստեղծությունը։ Սա արդեն իսկապես մի անհատի հույզերի ու ապրումների արտահայտությունն է, անհատի, որը, սակայն, մի ամբողջ ժողովուրդ խորհրդանշելու չափ մեծ է։ Կոմիտասի բանաստեղծությունները չունեն նրա երգերի ընդգրկման լայնությունը, խորքը և կատարելությունը, բայց նրանք էլ կոմիտասյան են ամեն ինչով՝ բնույթով, մտածողությամբ, արտահայտման ձևերով, բոլոր բանդակներով ու նախշերով։

Կոմիտաս-բանաստեղծը մեզ ծանոթ ու նվիրական նույն անձն է, որը տվյալ դեպքում ոչ թե երգում է, այլ՝ խոսում։ Խոսում է ծառերի ու ծաղիկների հետ, նրանց մասին, իր խոհերի մասին, բնության, կյանքի գնդեցկությունների, սիրո հրապույրի, մարդկային կատոտի, երազանքների ջերմության և այն ամենի մասին, որ կարող է խոսել մարդը, երբ մնում է ինքն իր հետ։ Կոմիտասի խոսքը զարմանալի պարզ է, այնքան պարզ, որ ավելին պատկերացնելը հնարավոր չէ։ Բայց դա ոչ թե մտքի կամ հույզի նոսրությունից է, այլ՝ բյուրեղյա մաքրությունից, մտածողության հստակությունից, որը պայմանավորված է ապրումի և խոհի լիահատար դաշ-

նությամբ։ Այդ խոսքի մեջ իսպառ բացակայում են զարդարիչ տարրերը, չկա ոչ մի արվեստական հնչեղանգ, ամեն ինչ երևան է հանվում ոչ թե ցուցադրման, այլ ինքնաարտահայտման սկզբունքով։ Նվ ամենուրեք «մատնվում է» կոմիտասյան ոճը, թափանցիկ, ճառագայթի նման մաքուր, ջերմ ու բնական մտածելակերպը, նրա հոգու և բնության բացառիկ հարազատությունը։

Սևուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,
Սարի վրա շար եկան։
Ծագեց առավոտ,
Պաղեց, սառավ օդ։
(«Աշնան օր»)

Մեր դասական և ժողովրդական պոեզիան դիտե բուխ ամպ, սևմուր ամպեր, սև-սև ամպեր և այլն։ Բայց ահավասիկ անսպասելին՝ սևուկ ամպեր։ Նվ այս «շնչավորված» ածականից էլ սկսվում է բանաստեղծական պատկերի բնականությունը, խոսքի հուզականությունը։ Ոչ մի տեղ Կոմիտասը չի խոսում բնության հանդեպ իր սիրո մասին։ Բայց ամենուրեք զգացվում է այն, զգացվում անմիջապես, հեղինակի յուրաքանչյուր հայացքի մեջ։ Այդ սիրով էլ նրա հոգին կապված է աշխարհին։ Այդ սիրուց է աշխարհն այդքան գեղեցիկ, և կյանքն այդքան պարզ ու հասկանալի։ Ու թերևս այդ

սիրով լցված լինելն է բանաստեղծին տալիս այն ներքին խաղաղությունը, որի մեջ ձուլվում են և՛ հիացում, և՛ զարմանք, և՛ ուրախություն, և՛ վիշտ։

Բանաստեղծը լցված է բնության իմաստնությամբ. գիտե բնության լեզուն, հասկանում է ամեն մի շարժումը, և ամեն ինչ նրա համար իմաստավորված է։ Եթե ծաղկանց վրա շաղ կա, ապա դա ոչ թե անկապրեն, այլ սիրո և մերձեցման օրենքով։ Եթե ձյան վրա ադամանդե աստղեր կան, ապա դա էլ բնության՝ գեղեցիկ և զարդարուն լինելու ցանկությունից.

Ե՛կ, շաղի՛կ, ե՛կ.
Ե՛կ առավոտե առավոտ...
Գա՛մ, ծաղիկ, գա՛մ,
Գա՛մ այգուն-այգուն
Ու ֆեզ շաղ տամ։

(«Ծաղիկն ու շաղիկ»)

Մարմանդ-մարմանդ ու աղամանդ-աղամանդ
Արևը զարկեց պաղի սրտին
Եվ աստղուկներր շարեց։

(«Ձմեռնամուտ»)

Մի տեղ Կոմիտասը նկարագրում է սարից փրթած հեղեղի տեսարան. հեղեղը շառաչելով գնում է՝ ճամփին ամեն ինչ խորտակելով։ Բայց ահա ելնում է արևը, ժպտում աշխարհին և մոռացնել տալիս հեղեղի սար-

ոտիքը։ Բանաստեղծության մեջ ոչ մի ընդհանրացնող պատկեր կամ տող չկա։ Միայն «կյանք» վերնագիրը հասկանալի է դարձնում հեղինակի ամբողջ միտումը։ Նա բնությունը, հասարակությունն ու ամբողջ կյանքը պատկերացնում, ընկալում է ամբողջության մեջ, և այդ մեծ Ամբողջը կանգուն ու մշտական է իր հակասություններով ու շաղկապներով։

Մի առանձին հետաքրքրություն ունի Կոմիտասի սիրային պոեզիան։ Նա, որ աստվածային շնչով հավերժացրեց գեղջկական հոգեբուխ սերը, մարդկային կարոտն ու պահապան հույսը, չէ՞ր կարող կյանքում չունենալ իր անձնական զգացմունքն ու ապրումը։ Բանաստեղծական լեզվով նա արտահայտել է իր սերը՝ նորից ամեն ինչ տեսնելով բնության համերաշխության մեջ։ Նրա «սուրբ սերը» ձուլված է բնությանը, որպես նրա գեղեցկություններից մեկը։ Բանաստեղծը միշտ էլ իր սերը որոնել է բնության մեջ, որոնել տատապանքով ու կարոտով.

Մաղիկ-ծաղիկ ինձ որոնել՝
Ամպի տակին՝ արևծագին շունչ առել,
Ջրի մոտին, կանաչ խոտին՝
Գլխիդ վերև ծիրան-զոտին փունջ արել։
(«Քո երազում»)

Որքա՜ն բնական և հեղինակի վիճակին համապատասխան է հնչում «Մենավոր» բանաստեղծությունը։ Սրբ

իրիկուն է լինում, և ամեն մեկը իր մտերմին է գըտնում, կուսակրոն բանաստեղծը, որ գտնելիք և կրծքին սեղմելիք վարդ չունի, քունն է գտնում իրեն մխիթար: Եվ դարձյալ որքան բնորոշ է մենավորիկ բանաստեղծի՝ ա՛յլ մի առիթով արված խոստովանությունը.

Եվ ա՛յս գիշեր, իմ երազում, ինձ հետ մեկտեղ
պարեցիմ,
Սեր-ոգիներ սուրբ սեղանում մեղրամոմեր
շարեցին...
(«Իմ երազում»)

Առավել հատկանշական է «Վարդիկա» բանաստեղծությունը, որն իր անմիջականությամբ ու գունագեղությամբ կարող է շփոթվել միջնադարյան լավագույն տաղերի հետ:

Կոմիտասի սիրային պոեզիան հատկանշվում է ոչ միայն լուսավոր, պայծառ տրամադրությամբ, այլև զգացմունքի կենդանությամբ ու համակող շիշտերով:

Սերած լինելով ազգային-ժողովրդական մտածողությունից, ինչպես բույսը՝ հողից, Կոմիտաս-բանաստեղծը Կոմիտաս-երգաստեղծի նման ափեափ լի է աւողջ կենսաազգացողությամբ: Դա նրան հետու է պահում որևէ որոշակի ստեղծագործական ազդեցությունից՝ միշտ մոտիկ թողնելով մայր-ակունքներին: Իր ժողովրդի հազարամյա քնարերգության արդար ժառանգորդը և արյունակիցը հայ երգը վսեմացնում էր՝ օծե-

լով իր հանճարի լույսով։ Իսկ երբ գրիչ էր վերցնում հյուսելու բանաստեղծություն, դրա մեջ ներթափանցում էր իր երգի բնույթը՝ տալով ինքնօրինակ ոճեր, բանաստեղծական ինքնօրինակ միտք ու մարմին՝ միշտ պահպանելով ժողովրդական մտածողության կնիքը։ Սա հատկապես զգացվում է հեղինակի քնարերգական ստեղծագործություններում։

Այդ ստեղծագործություններն այնքան են նուրբ, նրանցում նյութականը այնպես է լուծված ընդհանուր իմաստին ու պատկերին, որ նրանցից շատերի մասին պատմելը, ո՞ւր մնաց թե դրանք վերլուծելը, դառնում է անհարկի մի բան։ Դրանք կարդալիս մտածում ես, թե իրոք ինչքա՞ն կարող է քնքուշ լինել մարդկային միտքը և որքա՞ն թեթև՝ բանաստեղծական տողը։

Թախծանուշ «Միրանի ծառ»-ի ու սրտակեղեք «Ախ, Մարալ ջան»-ի հեղինակը արարիչն է նաև «Սիփանա քաջեր» հերոսական քայլերգի։ Հերոսականությունը, լավատեսությունը, ամենախավար հորիզոնում անգամ՝ լույսի շող նշմարելը հայ գեղջուկ երգի և մեր ոգու մշտագո հատկանիշն է՝ այնքա՞ն բնորոշ կոմիտասյան երգին ու բանաստեղծությանը։ Այս իմաստով պերճախոս է «Առաջ» բանաստեղծությունը, ուր հեղինակը կյանքի կռվում առանց տատանման միշտ առաջ ընթանալու կոչ է անում, չնայած դիշերին, շանթին ու կայծակին։

Հոգու խորքում Կոմիտասը մի առանձնահատուկ սեր ու գորով ունի դեպի գյուղաշխարհը։ Թեև հատուկենտ

ևն նրա գյուղերգերը, որանցում զգացվում է հայ գյուղի բնանկարը՝ ջնարացող ամառ, ցայտող ցորեն, կիզվող կալեր, դիզվող հասկաշարեր, և շինականներ՝ կիսամերկ, արևավառ, ասես պղնձե քայլերով։ Նման բնանկար ու պատկեր որքա՜ն էր տեսել Կոմիտասը, ու նրա հոգու համար, թերևս, չկար առավել հուզիչ բան, քան գյուղն ու գեղջկական նիստուկացը։

Կոմիտասի բանաստեղծություննները գրական կուռ մտածողության, գեղագիտական ուրույն ըմբռնումների արդյունք են։ Նրանք ցույց են տալիս հանճարեղ երաժիշտի, իրրև արվեստագետի, հետաքրքրությունների բազմազանությունը, մտքի բարձր թռիչքը, մայրենի մշակույթը խորապես տիրապետելը և գրական նրբագույն ճաշակը։ Նրա պոեզիան ավելի քան հասկանալի է դարձնում կոմիտասյան մեղեդիների բյուրեղյա ոճը, նրգերի խոսքերի մեծարվեստ մշակվածությունը, մտքի, հույզի անսահման խորությունն ու ձևերի ավարտուն հղկվածությունը։ Երաժշտականի նման, Կոմիտասի գրական մտածողությունը ևս դասական է։

Դեռ ի՜նչ սքանչելիքներ պիտի երկներ նա իր կյանքի եռեղեռնյան շրջանում, երկո՜ւ տասնյակ տարիների ընթացքում, եթե պատմությունն ու ճակատագիրը լինեին այնքան բարի, որ գոհանային՝ նրան բաժին թողնելով իր նահատակված ժողովրդի ահավոր վիշտը միայն։ Մինչդեռ նրան բաժին ընկավ խաչերից ամենածանրը և գողգոթաներից ամենաբարձրը. ճակատագիրը մթագնից նրա լուսեղեն ուղեղը, պատմությունը կորցրեց նրա

հազարավոր և պահպանեց միայն հարյուրավոր երգերը։ Նրա հոշոտված թղթերի մեջ, երգերի կողքին, հարկավ քիչ չէին նաև բանաստեղծությունները։

Կոմիտասի փրկված բանաստեղծությունների վերջին տեղը աշխարհի ամենասրտաճմլիկ ու ողբայացուն երևույթներից է. այդտեղ իրար են բախվում լույսը և գիշերը, բանականությունը և ցնորքը, ծվատվող հիշողությունը և ահագնացող անկապությունը։ Առաջինները հետզհետե, թեկուզև համառելով ու մաքառելով, տեղի են տալիս։ Միայն երբեմն-երբեմն վերադառնում են գիտակցության լուսավոր, հավասարակշիռ պահերը։ Այդ պահերին տողերը դառնում են նախկիններին նման բնաբուխ, վճիտ ու հմայիչ։ Բայց այդ կարճատև րոպեներին հաջորդում են մթագնումի տիրականացող ժամերն ու շաբաթները, երբ տողերի երանը՝ անակնկալ օրհասից բեկված՝ ցրիվ է գալիս, և մտքերն իրար չեն բերվում ու խարխափում են այստեղ-այնտեղ, կորցնելով բանականության ափերը։ Բայց նույնիսկ այդ օրինակ խեղված տողերում դարձյալ Կոմիտասն ինքն իր հետ է. նրա հոգու բրբռացող լույսը ջանում է պատառել մտքի խավարը և պարտադրել նվիրական պատկերներ՝ խնկի ծառ, կռունկ, պատարագյալ Քրիստոս, հայրենի գողթան երգերի հուր-ծով-ծիրանի, գեղջկուհու օրոր...

Սիրտ պատառելու չափ հուզող ու սահմռկեցնող այդ չափածո տողերը կոմիտասյան ողբերգության ամենախոսուն էջերն են, էջերն ամենադաժան մի ողբերգու-

Թյան, որ անանձնական էր, որովհետև պատկանում էր համորեն ժողովրդին։ Այդօրինակ ստանավորները, որ անկատար են և չունեն գրական արժեք, հարկ չկա հրապարակ հանել՝ մի ավելորդ անգամ չխռովելու համար ընթերցողի հոգին։


Կոմիտասյան պոեզիան, որն իրերի բերումով դուրս մնաց հայրենի գրականության հերկերից և չունեցավ այն դերը, ինչ որ կարող էր ունենալ, ճարտարապետական մի փոքրիկ, վերապրող շինվածք է՝ հինավուրց Զվարթնոցի վերականգուն մակետի նման։ Գրական այդ շինվածքը ազնիվ ու ճաշակավոր շաղախից է։ Նրա կերտվածքն ուրույն ու ինքնաստեղծ է, և նրա գունագեղությանը հատուկ հմայք են տալիս նարեկյան ու դուրյանական երանգները։

Մի փոքր փոխելով Կոմիտասի քառյակներից մեկը, նրա հիշատակին կարող ենք ասել ի՛ր իսկ խոսքը.

Սերդ՝ անմիա աղով բացոտեցին,
Բեդ՝ խավար ձրով խոցոտեցին.
Երկրիդ ճողեն փա՜ռ'դ բուսավ...

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Մայիս, 1969



Կ Յ Ա Ն Ք

Շառա՜չ, շառա՜չ...
Սարեն հեղե՛ղ փրթավ,
Վապո՛ւմ է առաջ ու շեշտակի.
Հողեն ծառեր ծամելով,
Հողեն քարեր քամելով,
Գետը լցավ ու գալարեց,
Սիրտը խցավ ու պալարեց.
Յելա՜վ, ցելա՜վ...
Ամպեն արե՛վն ելավ,
Նապում է կանաչ ու հեշտակի.
Սարի խոցին ժպտելով,
Ծառի ծոցին ծպտելով,
Պաղատ գետին ջե՜ր բերելու,
խավար սրտին սե՜ր մերելու:

ԳԱՐՈՒՆ

Հալուն-հալուն,
Սարին, ձորին խոսելեն,
Երես-երես,
Քարեն, հողեն հոսելեն՝
Գարուն իջավ մխալով,
Առուն շիջավ ծխալով:

Բաղիկ տեսա՝
Լուսին-ցողին՝
Լողիկ-լողիկ արբելեն՝
Կանաչ տափերին:

Առուն փեսա՝
Հողի գոգին՝
Դողիկ-դողիկ տարփելեն՝
Ծաղիկն ափերին:

Հալուն-հալուն,
Ծառի, ծաղկի հոտերով,
Երեր-երեր,
Ծովի ցամքի մոտերով՝
Առուն ուռավ՝ վերացավ,
Բուրվառ գարուն հեռացավ:

ՆՈՃԻՆԵՐՆ ՈՒ ՄԱՅՐԻՆԵՐ

Մուգ նոճիներ միգապար՝
Ճամփի վերև սիգապար՝
Դեպի երկինք հրապայր,
Կանաչ հուսով սրածայր,
Ճյուղերն ի վեր կոնավոր՝
Կարծես լինին տոնավոր:

Կուսատերև մայրիներ՝
Հուսաբեղուն այրիներ,
Փշերն աչքին պիշելով՝
Արև օրեր հիշելով,
Քարերի ծոց պատառել,
Ամպերի գոգ կատարել:

Աշուն կեանք

Աչքի առաջ,
Հառաչ-հառաչ,
Խորհրդավոր տերևներ,
Բունեն ընկած կեղևներ,
Հողի վրա,
Դեղին հուսով
Կողի վրա:

Լուռ, անսերունչ,
Խուլ, անմռունչ՝
Չորով-փորով կեռ ծառեր,
Ծռով-փռով լեռ քարեր,
Եվ հենավոր՝
Սարի կողին,
Ե՛վ մենավոր:

Ս Ի Ր Ա Հ Ա Ն Կ

Ո՞վ է տեսել ծովի ծավալ
Հովի թավալ.
Կամ՝ արտերում հասկի տալիք
Ոսկի ալիք:

Աշուն օր

Սևուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,
Սարի վրա շար եկան:
Ծագեց առավոտ,
Պաղեց, սառավ օդ:

Գոռաց երկինք, բուք արավ,
Հևաց, հևաց.
Ծերուկ երկիր սուգ արավ:
Ճաքեց հեռուն ամպ,
Երկիր դողաց-բա՛մբ:

Բողբոջ արև շող կապեց,
Դողաց, սողաց,
Արյուն-ամպից քող կապեց:
Վառեց լեռան լանջ,
Լեռան ցավատանջ:

Տեղաց անձրև մաղ տալով,
Մարմանդ-մարմանդ,
Հոգնած տերև շաղ տալով:

Երկիր քուն դրավ,
Եվ թռչուն թռավ:

Հուկված առուն փախ տվավ
Սողուն-սողուն,
Ձորում մշուշ կախ տվավ:
Քամին ելավ վեր,
Արավ տարուբեր:

Մոխիր ամպեր ժիր եկան
Դալուկ-դալուկ,
Սարի վրա ցիր եկան:
Հալեց աշուն օր
Կյանքիս սևավոր:

1905

ԾԱՂԻԿՆ ՈՒ ՇԱՂԻԿ

Ե՜կ, շաղի՛կ, ե՜կ.
Ե՜կ՝ առավոտե առավոտ.
Չելնե՜ արև տաքուկ ու ծարավուտ՝
Լկե մեր պագուկ:

Գա՜մ, ծաղի՛կ, գա՜մ.
Գա՜մ՝ այգուն-այգուն
Ու քեզ շաղ տամ:

Դեռ չելած արև խայտուն ու ցայտուն՝
Շաղիկ-շաղիկ թառավ սրտիկն ու հոգին՝
Ծաղիկի ծարավ գոգին՝
Ու գունագեղ թուշիկ
Շա՛ղ դառավ հուշիկ-հուշիկ:

ԹԵՐԹԻԿՆ ՈՒ ՅՈՂԻԿ

Գարուն-թերթիկն ընկել էր ծալուկ՝
Ինոտերի մեջ դալուկ.
— Աշուն-ցողիկն իջել էր վրան՝
Հողմերի հետ երան:

Աշուն

Ծառեր, թփեր լեցուն միրգ,
Մառան տարան գիրկ ու գիրկ,
Աշուն սնավ:

Սաղարթ-սաղարթ սարսելով,
Ոսկի տերև դարսելով,
Աշուն քնավ:

Տարափ ու բուք փչելով,
Վայուն-մայուն ճչելով՝
Աշուն ծնավ:

Ա Շ Ո Ւ Ն-Գ Ի Շ Ե Ր

Զյունիկ լուսին
Սարի ուսին,
Դեղին-կարմիր շաղալեն,
Ալիք-ալիք խաղալեն,
Ծովի ծոցին՝
Ալ ժապավեն
Տվել բոցին:

Ծառեր, հողմեր,
Ամեն կողմեր,
Թռչուն դառել երգելով,
Հեռու-հեռու հերկելով,
Երան-երան
Թռչելով
Օդի վրան:

ԵՐԿՆԻ ԿԱՑԾԵՐ

Երկնի կայծեր բյուրափառ՝
Հրո ոտվեն ցիրուցան,
Գիշեր-երկիր հյուրաբար՝
Լուսո ծովեն կաթեցան՝
Աչքին սոսուն,
Մտքին խոսուն:

ՍԱՐ ՈՒ ՁԱՐ

Անհա՛ սարը՝ ձորը բացել՝
Ե՛վ աճավոր, և՛ կանաչ.
Անհա՛ քարը՝ օրը գացել՝
Ե՛վ մաճավոր, և՛ անաչ:

ՁՄԵՌՆԱՄՈՒՏ

Երբ երկիրը պատեց
Վերմակ-վերմակ ու թեթևիկ-թեթևիկ,

Ճերմակ-ճերմակ ու թիթեռնիկ-թիթեռնիկ,
Ձյունիկն իջավ արծաթ երկնքով,
Եվ երկիրը պատեց:

Վերմակ-վերմակ ու թեթևիկ-թեթևիկ,
Հողիկը շիջավ ոսկի երկունքով,
Եվ աչուկները փակեց:

Արգանդ-արգանդ ու դարավանդ-դարավանդ,
Ջրիկը պառկեց հողի գրկին,
Եվ ըստինքը սառեց:

Մարմանդ-մարմանդ ու ադամանդ-ադամանդ
Արևը կարկեց պաղի սրտին,
Եվ աստղուկները շարեց:

* * *

Գարուն ցելավ ծաղկունիկ բոցերով,
Ամառն ելավ հասկունիկ ծոցերով.
Աշունն առավ խատուտիկ բարերով,
Ձմեռ պատավ պատուտիկ սառերով:

* * *

Ելավ տերև՝ երև-երև կանաչ ծովանի,
Տարփուն-տարփուն կապույտ հովանի.
Ժպիտ քողով սրտիկ հովին ծռած,
Ծպիտ դողով սրիկ քովին դրած:

* * *

Հըրաբարձ լեռներ՝ կոնելով՝
Նարգիլ դալարուն դիպել.
Սողուն կողեր շողելով՝
Ոսկին արծաթ շիթել:


Աստ

ՃԵՐՄԱԿ ՀԵՐ, ԳԱՐՈՒՆ ՍԵՐ

Ես ու դու սե՛ր ենք,
Մեկ սրտի տե՛ր ենք.
Նոան ճյուղերով բոցուն,
Սիրո տաղերով արբուն:

Տե՛ս, իմ հեր՝
Ճերմակ սեր,
Որ պաղել էր շատ ձմեռ,
Սրտիդ բաղում դալարեց:

Տե՛ս, քու սեր՝
Գարուն էր՝
Որ գոցեց իմ խոց ու վեր,
Սըրտիս խաղում ծավալեց:

ՀՈՎ ՈՒ ԾՈՎ ՍԵՐ

Կապույտ երկինքն էր եռում,
Կարմիր երկիրն էր ջեռում.
Հուր ու Հարավ հևումն
Թախիծ ու տոթ էր բերում:

Հոգիս եկավ հովի պես,
Սերը սրտում ծովի պես.
Ծոցին վարդեր՝ ասաց.—Տե՛ս,
Քեզ սիրելու եկա ես:

Վարդ ու քրքում էր բուրեց,
Սիրտս սրտում գուրգուրեց.
Արև-Լուսին պագերով՝
Երապ-երապ ճամբուրեց:

Հոգի՛ս, ասաց ու ծռեց.
Ծամեր բացավ ու փռեց.
Ստինք-ստինք փարելով՝
Հույսս մարավ ու լռեց:

ՄԵՆԱՎՈՐ

Երբ անտառում լուսնի ծովը,
Սիրո հովեր,
Սողոսկեցան ծառե ծառ
Ու սարե սար,

Եվ ամեն մարդ՝
Գլտավ մի վարդ
Սրտիկին կարդ,

Ես մենավոր մտա տուն,
Ինձ մխիթար գտա քուն,
Որ աչերուս կապեց մեջ
Ու տարածեց վերարկուն:

Ի Մ Ե Ր Ա Ջ Ո Ի Մ

Եվ ա՛յս գիշեր, իմ երապում, քեզ հետ մեկտեղ պարեցինք,
Սեր-ոգիներ սուրբ սեղանում մեղրամոմեր շարեցին:
Ոսկի-արծաթ ամպի ծալեն նուրբ ու բարակ
քող ճարեցինք,
Ինծի-քեզի կարմիր-կանաչ սիրո շապիկ կարեցին:

ՔՈ ԵՐԱԶՈՒՄ

Եվ ա՛յս գիշեր, քո երակում, տեսել ես, որ ես ու դու
Երես-երես ճանաչել ենք սիրո ծովում իրարու...

Քո սուրբ սերը սար է դառել
Դալարագեղ, երկնածրար ու բեղուն,
Գլխիդ վերը ամպ է շարել՝
Գալարահեղ, կամարակապ ու կեղուն:

Սարի շողեն, ամպի քողեն՝
Մենավորի ոգին ծնել, դեգերել,
Ձեռին մի բույս՝ կանաչ ու կույս՝
Խորհրդավոր ձորեն քաղել ու բերել:

Ծաղիկ-ծաղիկ քեզ որոնել՝
Ամպի տակին՝ արևծագին շունչ առել,
Ջրի մոտին, կանաչ խոտին՝
Գլխիդ վերև ծիրան-գոտին փունջ արել:

ՎԱՐԴԻԿՆ

Խցիկիս մոտ ջուր եմ արել մարգ ու մարգ,
Վարդիկիս ոտ հուր էր դառել բարկ ու բարկ.
Ելա անհոգ սարերի գոգ շրջելու,
Սիրու ամպեր բոլորեցին թրջելու:

Մահիճիս քով հուր եմ վառել դողունի,
Վարդիկիս հով դուռ էր ճարել գողունի.
Լանջես ի վեր սիրո շիթեր շաղելով՝
Երապ-հույզեր նվագեցին խաղալով:

Գիշեր գացավ՝ լուսին-լուսին հուսալի
Նոր օր բացավ՝ արևն ուսին լուսալի:

Մենավորի խցիկեն՝
Հուսո սարսակ շավիղով
Աշխարհ մտա,
Վարդի բույրի գծիկեն՝
Հովի բարակ տավիղով՝
Քեզի գտա:

ԱՆՄԱՐ ՍԵՐ


Քեզ չըսիրե՞լ,
Գեհեն կորել
Ու կըրակով ճոգին փորել:

— Քեզի սիրել՝
Դըրախտ երթալ
Ու վարդերով քընանալ:

* * *

Ես սիրեցի անփուշ վարդ,
Տեսա ճերմակ, անփուշ վարդ,
Կրծքիս վրա դրի կարդ,
Հոտոտեցի, բույր չուներ,
Սիրտս մխաց բարդ ի բարդ:

Տեսա կարմիր փշոտ վարդ,
Ավա՜ղ ձեռքս ծակոտեց,
Արյուն հոսի վարդեն ցարդ,
Բույրը մտավ քմքես ներս:


Munch

Դ Ի Տ Ա Կ

Դու ինչե՞ր ես տեսնում, ինչե՞ր, ո՛վ դիտակ,
Որ մեր աչքին՝ աներևույթ, անգիտակ.
Երկնի օրը քեզանով ենք կատարում,
Երկրի խորը քեզանով ենք պատառում:

Դարձի՛ր, դարձի՛ր, ո՛վ իմ դիտակ լուսածին՝
Կյանքի, ջանքի, հուսո հնար ճարելով,
Ջարթի՛ր, կարթի՛ր, ո՛վ իմ գիտակ հուսածին՝
Մտքի, հոգու սիրո քնար լարելով:

ՍԱԼԱՀԱՏԱԿՆ ՈՒ ՈՒՂԻՆ

Սալահատակ-սալահատակ քալեցի,
Սալի վրա կյանք ու ջանքս ճալեցի.
Ոսկի, արծաթ սալի սրտում սարերով,
Ծառ ու ծաղիկ սալի շրջում բարերով:
Սալը հեցած և ո՛չ մի բան չիմացավ,
Վրան հիմար կյանքի ուղին վիմացավ:

Ա Ս Տ Վ Ա՛Ծ Ի Մ

Սիրո սերմը կատեցիր,
Հրո ջերմը պատեցիր.
Հողին շունչդ փչելով՝
Հոգի կյանքդ կաթեցիր;

Եվ Արևդ լուսին մարմնես մաղեցավ,
Եվ իմ հոգին Հոգուդ ցողով շաղեցավ,
Իմ սրտիկի սերն ու բոցը, սիրո խոցը՝
Ամպերի մեջ, որպես կայծակ սաՒեցավ։

ԻԲՐ ՋԱՐԴ

Օրե օր
Ճրագ աո,
Պահե վառ՝
Մտքիդ յար
Լուսատու,
Նորեն նոր
Կըրակ տար
Անըսպառ՝
Սրտիդ լար
Հուսատու:

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ

Բարակ ուղին սողալով,
Ոտի տակին դողալով,
Ճամփի ծայրին բուսել է
Կյանքի ծառը շողալով:

Ի՞նչ լայն սիրտ է, որ ունի
Այս ճանապարհն Անհունի...
Մարդու, բույսի, գազանի
Եվ թևավոր թռչունի:

Ա Ռ Ա Ջ

Այսօր, նորեն, դեմքիդ վրա գիշեր է կաթել,
Շանթ ու կայծակ ճայթելեն.
Սրտիդ խորեն արյուն կեռա՝ ամպեր են պատել,
Հուր ու փայլակ սայթելեն:

Սրտով բարի,
Հոգիդ արի՛,
Որ քու նավը
Չըշվարի:

Կյանքի կռիվ՝ ճիշտ դատելով՝
Կանաչ, խռիվ միշտ կատելով:

Դեպի առա՛ջ.
Հեռի՛ հառաչ:

ԲՈՒՍԱԲԱՐԵՎ

Սնունդը՝ ծառին

Ծառի՛կ, ծառի՛կ,
Շունչդ անառիկ.

Ի՞նչ ու ինչպե՞ս՝
Անջուր անլուր,
Քո բուռ ու կուռ,
Դալարում ես
Դեպի երկին փռելով,
Ու ճյուղերդ ջրելո՞վ:

Ծառն՝ արմատին

Բունի՛կ-բունիկ՝
Կաթնետունիկ.
Ի՞նչ ու ինչպե՞ս
Քո երակներ
Լուսո ակեր
Պալարում ես
Եռուն-եռուն կրակելով,
Հեռուն-հեռուն ճրագելո՞վ:

Բունը՝ բարին

Բարի՛կ-բարիկ՝
Շունչ-պարարիկ,
Ի՞նչ ու ինչպե՞ս
Տնիկ-տնիկ
Բակմածնիկ
Գալարում ես
Ոգի-ոգի նվագելով,
Պաճիկ-պաճիկ հավաքելո՞վ:

Բարը՝ ծաղկին

Ծաղի՛կ-տիրուն՝
Երկրի՛ սիրուն.
Էդ ի՞նչ ու ինչ
Թերթիկ ունես՝
Կարմիր-ձուն ես.
Ու լարում ես.
Բոլոր-մոլոր եռ թշերով,
Ոլորվելով սեր նշերո՞վ:

Ծաղիկը՝ տերևին

Տերե՛վ-տերև,
Գլխավերև,
Էդ ի՞նչ ու ինչ
Առակ-առակ՝
Կանաչ-կարագ

Նկարում եմ.
Քու մատիկներ հեղուն-բեղուն
Ու պատիկներ եղուն-մեղո՛ւն:

Բոլորն՝ իրար

Միանալո՛վ՝
Հիանալով:

Ի՜նձ...

Մահո՞ւ հովեր՝
Թեև ճկուն՝
Թևերն արձակ
Կփքեն:

Ահա՜ ծովեր՝
Թեև նկուն՝
Ձևերն արձակ
Կըկքեն:

Հի՜ն տարիներ,
Սի՜ն տարիներ՝
Բուխ գարունով.
Ծուխ շարունով:

Ջրեր ծալեակ՝
Թեև թեթև,
Իրար-հրան՝
Կըշրչեն...:

Հըրեր հալյակ՝
Թեև դեղև՝
Իրար-կռան՝
Կըհչեն...

Նո՛ր տարիներ,
Եռ աշունով.
Օր բարիներ՝
Սեր դաշունով:

ԵՒ ՈՒ ՍԵՐ

Երկիրը եռում է՝ կողիկը գոցելով՝ ծաղիկ-ծաղիկ,
Առվակը սիրում է՝ ոռոիկը խոցելով մաղիկ-մաղիկ.
Վարդիկը ջեռում է՝ շողիկը բոցերով՝ լռիկ-լռիկ
Հովիկը ծիրում է՝ լողիկը ծոցերով՝ ջրիկ-ջրիկ:

ԽԱՉՅԱԼԻՆ

Ծընունդ կուսին,
Լսա՛չդ ուսին՝
Հասկեր-հասկեր քաղելով՝
Անաչ սրտերում կալեցիր,
Սընո՛ւնդ բարի,
Քա՛ջըդ արի՝
Ապգեր-ապգեր մաղելով
Կանաչ հրդեհում հալեցիր:

Մարգարտահեռ՝
Ջեր քրտինքներ՝
Այտեդ երկին՝
Կայլակ-կայլակ հոսելով՝
Մեր մաճը լացեց,
Մարեցին.
Ու անվեհեր՝
Սեր-աչիկներ՝
Փայտեն երկիր՝
Փայլակ-փայլակ խոսելով՝
Իր ճաճը բացեց,
Վառեցին:

Ա Ղ Ե Ր Ս

Կա՛ց, Տե՛ր, Տե՛ր իմ,
Բա՛ց, Տե՛ր, սե՛ր իմ.
Զարկին դևեր
Իմ թևեր.
Տո՛ւր, Տեր,
Հո՛ւր, Տեր,
Որպես խոտեր
Էլ չըդողան
Իմ ոտեր...:

ՓՇՈՒՐ ՄԸ

Մտի՛ր խորը,
Գտիր նորը.
Վանե՛ հինը,
Բանե՛ մինը:

* * *

Կարմիր ցայգով՝ մանուշակ երկին նավեցիր.
Կանաչ այգով անուշակ հերկին բավեցիր.
Խաղող ցողըդ շողն էլ վրան՝
Քաղով դողով՝ ծողն էլ վրան:

* * *

Սերըդ անմիտ սըրով բոցոտեցին,
Բեռըդ խավար հրով խոցոտեցին.
Երկրիդ հողեն խաչըդ բուսավ,
Կյանքիդ կողեն աչըդ հյուսավ:



ԿՈՒՅՐԸ

Տե՛ր իմ.
Սե՛ր իմ.
Զարկին Քաջքեր՝
Կուրացուցի՛ն իմ աչքեր.
Լո՛ւյս տուր.
Հո՛ւյս տուր.
Ասա՛՝ նայե՛՝
Իմ աչերուն խնայե:

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Ճակատդ օծուն՝
Լուսավորչա կանաչ մեռոնով,
Լուսավորչա կանաչ մեռոնով՝
Թող կանանչեն հուռ ճյուղերդ.
Ու ակդ բոցուն՝
Լուսավորչա կարմիր կերոնով.
Լուսավորչա կարմիր կերոնով՝
Թող ճաճանչեն հուր յուղերդ:

Ս Ե Ր-Հ Ո Վ Ի Կ

Շնչե՛, հովիկ,
Դու թոթովիկ՝
Կյանքի սերը՝
Սրտի բերը՝
Պարուրելով,
Ծարուրելով՝
Ծովի ալքեն,
Ամպի ծալքեն,
Ալ ծաղկունաց
Հրո հալքեն,
Թող նա վառե՛ իմ ծոցիկին ոսկի լույս,
Հողմահարե՛ դու բոցիկին, որ իմ հույս՝
Լանջիս վրա
Հավետ եռա՛:

ՍԵՐ ՈՒ ՋԵՐ

Արևն այտեն
Ծիրան ցայտով,
Լուսիկ-լուսիկ ճրագեց,
Կապավ ուռեն
Վարդի հոտով,
Հուսիկ-հուսիկ կրակեց:

Ծառի քովեն,
Սարի հովով,
«Ջիս կսիրե՞ս» շշնջեց.
Հոգուս խորեն,
Սիրու ձորով,
Ջիս կսիրե՞ս, ցրմնջեց.

Աչքի տակեն
Սրտիս ակով
Ծաղիկ-ծաղիկ ծիծաղեց,
Գոգի մարգեն
Բարակ գարկով
Գաղիկ-գաղիկ շաղ մաղեց:

Աղբեր քուրեն
Սառն աղբուրով
Տորոն-տորոն սեր փնջեց:
Հուր աչերեն
Լուռ սլաչերով
Որոն-որոն ներշնչեց:

ՍԵՐ ՈՒ ԲԵՐ

Գարուն սերն էր՝
Դալար-օրերում շոգիացավ սրտիս վրա՝
Ամպեր-ամպեր ծալ ու քաշ:

Կյանքի եռն էր՝
Ամառ-ձորերում ոգեցավ կրծքիս վրա՝
Լուսին-լուսին հալ ու մաշ:

Աշուն-բերն էր՝
Պտղիկն էր հոգում ծառերով՝
Սրտիս բակին նուշիկ-նուշիկ բարդելով:

Այն ձմեռն էր՝
Ձյունիկն իր գոգում սարերով՝
Կրծիս տակին ուշիկ-ուշիկ կարթելով:

ՈՍԿԻ-ՄԵԴԱՅ

Ա՛յ, վա՛ռ աչեր.
Այն ի՞նչ ամպ էր
Սարի գագաթին,
Ճերմակ-ճակատին
Արծաթ աչեր տալով՝
Ցիր արավ:

Ճերմակ-ճակատեն՝
Սարի փափագին,
Դարի պապակին
Շար մարգարիտ տեղաց.
Շար մարգարիտ տեղաց,
Լար մարգերդ բիլ արավ,
Ուսուն-ձրով վառ մարգերդ ծիլ արավ,
Ջառ մարգերդ ոսկի-մեղաց.
Ոսկի-մեղաց լուսուն-ջրով
Մկրտեցին քու մաճերդ:

ՈՒՌՒ ՑՈՂ

— Մայրի՛կ, մայրի՛կ,
Մեր ուռենին ի՞նչ է լալիս առվի ափին:

— Հատի՛կ, հատի՛կ,
Իր ճյուղերեն ցող է տալիս կանաչ տափին:

ԽՈՐՈՒՆԿ ՈՒ ՄՈՒԳ...

Էն ի՛նչ ամպ էր,
Սարի գագաթին տալով՝
Ցիր արավ
Արծաթ տեղաց.
Արծաթ տեղաց՝
Ճերմակ-ճակատին,
Գոգեն անձրև գալով՝
Ծիր առավ:

Էն ի՛նչ ամպ էր
Սարի փափագին հալով՝
Սիր արավ,
Ոսկի բեղե՛ց.
Հալուն-հրով՝
Ոսկի-մեղաց.
Լուսուն-գրով մկրտեցին՝
Քու մաճերըդ:

Ա՛յ, վա՛ռ աչեր
Էն ի՛նչ ամպ էր

Սարի գագաթին
ճերմակ ճակատին
Արծաթ-պաչեր տալով
Ցիր արա՜վ:

ճերմակ-ճակատին
Սարի փափագին,
Դարի պապակին
Շատ մարգարիտ տեղաց՝
Լար մարգերըդ բիլ արավ:

Ուսուն-հրով վառ մարգերըդ ծիլ արավ,
Ջառ-մարգերդ՝ ոսկի-մեղաց,
Ոսկի-մեղաց լուսուն գրով
Մկրտեցին քու մաճերըդ:

Ա Ղ Ո Թ Ք

(Նվեր օրիորդ Լուիզ Գավաքճյանի)

Վա՛րդ, դու կաթե՛ կարմիր ոգիդ,
Ճերմակ շուշան՝ սիրտ ու հոգիդ.
Մանուշա՜կ
Անուշակ՝
Գուրգուրե
Ու բուրե:

Տո՜ւր, սուսունիկ՝ ոսկի արև,
Հո՜ւյս անթառամ՝ կյանք հարատև:
Օրե օր
Նորե նոր
Հար գարուն
Զարդարուն:

1914 25/ԺԱ Կ. Պոլիս

* * *

Անուշ գարուն,
Ծաղիկ, բողբոջ,
Զվարթ առուն,
Կայտառ խոխոջ,
Կանաչ դալար,
Ծիծաղ ցողիկ,
Վտակ դալար,
Դուք ո՞ւր թողիք:

Հ Ո Վ-Ս Ե Ր

Նուրբ հովի պես լարերով՝
Սուրբ ծովի պես պարելով,
Սերըդ սրտում պահեցիր,
Սրտիս խորքում գահեցիր:

Աշունն եկավ ծառին, սարին հևելով՝
Անծրև թելեր փոշի-փոշի թևելով.
Պտուկը ճոխ՝ առին տարին
Տերևները կսնաչ-ճանաչ պեղելով:

ՇՈՒՇԱՆ ՍԻՐՏ

Շուշան սիրտըդ մաքառեց տարի-տարի
Կանքիդ արև-օրերում.
Սուսուն-սերըդ թափառեց արի-արի
Լանջիդ լուսին ձորերում:

Շրթունքներըդ մանուշակ դալար-դալար
Սիրո գարուն կովանի,
Գանգուր հերըդ անուշակ գալար-գալար
Համբույրներուն հովանի:

Սերըդ սեր էր ծագեցավ
Պատույտ-պատույտ դափնիների ճյուղերով,
Սիրտըդ սիրտ էր հագեցավ
Կապույտ-կապույտ բալասանի յուղերով:

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Հոգիս թիթեռ
Մի վայր, մի վեր
Հույս ծովերով թևելով՝
Հոգիս մի բեռ
Անմայր անսեր,
Լույս հուլերով հևելով...:

Բ Ա Ղ Ջ Ա Ն Ք

Ջայնիկ ունիմ՝ հայուն-մայուն,
Սրտիդ բունեմ կայուն-մայուն.
Ո՛վ իմ թևիկ,
Տո՛ւր իմ ևիկ
Ծռչեմ երթամ...:

ՀՈՍՈՒՆ-ԽՈՍՈՒՆ

Պապիկ ծառն էլ
ճերմակ ծոցիկով
Ջրիկ բոցիկով
Խորունկն է խառնել,
Բապուկն է առել
Քարերին դառել
Հոսում է, խոսում,
Ափիկ-ափիկ սրդոցում:

Երկար բարունով
Դալար արունով
Սարին բրելով,
Քարին գրելով.
Դաղձն է ծունել
Փառուկ դաշերին,
Մաղձն է բունել
Սրբտիդ ծաշերին:

ԿԱՐՄԻՐ ԲՈՑ

Կանաչ դաշտի կուրծքը պայթեցավ,
Գոգին հսկա ժայռը ճայթեցավ.
Ճայթեցավ ու ծառացավ,
Ծառացավ ու տեղում քարացավ:

Կապույտ երկնի ծոցը ծռվացավ,
Կարմիր երկրի բոցը հովացավ.
Ծռվացավ ու ծավալեց,
Ծավալեց ու հողմով թավալեց.

Բոց-մոց՝ կարմիր երկիր հովանալով,
Ծոց-ծոց կապույտ երկիր ծովանալով՝
Ծովանալով ու դողով ծավալելով,
Ծավալելով ու չորս կողմ թավալելով՝

Հողմը ծառացավ, ու բոցը հանգավ...:

Ե Ս Ե Մ

Ես քու սերն եմ,
Սիրուդ ջերն եմ,
Մենավոր.

Ես եմ քո կին,
Դու՝ իմ հոգին
Հենավոր:

Զայնըդ հնչեց սիրո կայծակ շեշտակի,
Հոգիս շնչեց գարուն-փայլակ հեշտակի:

Շունչըդ առա կուռ ծոցերով՝
Գըրիչ դառա հուր բոցերով:

* * *

Այն ի՞նչ ամպ էր՝ աղոտ-աղոտ ծռվեցավ,
Ու թուխ պատեց կապուտեց.
Այն սև ամպ էր՝ մաղոտ-մաղոտ ցրվեցավ,
Ու պուխ կապեց պատուտեց:

Ծ Ո վ Ա կ, Ն Ա վ Ա կ

Ծավալ ծովակ՝ ալին վտիտ փնջելով,
Յավը սրտում՝ շամքերի պես ցցելով,
Շնչում էր երկունքներեն լռվացած.
Վրան նավակ՝ հովի ճպիտ ջնջելով,
Մուխը տրտում՝ ամպերի պես կցելով,
Փնչում էր մարդիկներեն ծռվացած:

Ջուրն ու խոցը երևում է՝
Ծովի վրա ծիր ու ծիր,
Հուրն ու բոցը երերում է՝
Հովի վրա ցիր ու ցիր:

Գ Ո Ր Ո վ-Ս Ե Ր

Ի՜նչ դողդոջուն ոտեր՝
Սվվացին որպես խոտեր,
Իջա վայրիկըս.

Ի՜նչ բողբոջուն այտեր՝
Միջօրյա վարդ էր ցայտեր,
Գտա մայրիկըս:

Գիրկ գրկին՝ առավ ու դըպավ,
Սիրտը սրտին՝ վառավ ու կըպավ՝
Թևեց աչելով.

Ջեռքը ձեռքին՝ առավ ու Ռըպավ,
Ճերմակ վարդյակ՝ կուրծքին դըրավ՝
Լռեց պաչելով:

ՀՈՒՆՉ

Ջեռալ ամառն ու ջեռալ,
Բերալ կառարն ու բերալ,
Յայտեց ցորեն
Արտեն, ձորեն:

Ճամփաներում՝
Կյանք է եռում՝
Դաշտեն կալեր կիպվելով,
Հասկեն շարեր դիպվելով:

Երգ ու տաղով
Ոսկի սայլեր ու որան.
Հերկ ու բաղով
Պղինձ-քայլեր շորորան:

Երգ ու տաղեր՝
Ոսկի սայլեր օրորում,
Հերկ ու բաղեր՝
Պղինձ քայլեր շորորում:

* * *

Մեր հայ գավառն է խավար,
Տգիտության է ավար.
Ուսում տարեք
Ու լույս վառեք,
Ու հույս վառեք,
Հայ տգետը վտարեք:

Պանծա՛ դու, հայ միություն,
Գյուղին տվիր հայ դպրոց,
Սրտի, մտքի կուռ հնոց.
Պանծա՛ դու, հայ միություն,
Պանծան հայեր բարեգործ.
Հայուն՝ դպրո՛ց,
Հայո՛ւ դպրոց:

Մեր հայ երկիրն անապատ,
Ու հայն ընկել պատեպատ.
Գութան տարեք
Ու հող վարեք,
Ու խոր վարեք,
Հողի կուրծքը պատառեք:

Պանծա՛ դու, հայ միություն,
Գյուղին տվիր հուր գութան,
Որ գյուղացիք արտ փութան,
Պանծա դու, հայ միություն,
Մաճկալ, հոտաղ ձայն կուտան՝
Հայուն՝ գութան,
Հայո՛ւ գութան:

* * *

Ելավ շինական՝ ցանից առավ
Բուռը լի ցորեն.
Անցավ դաշտեն ու ձորեն,
Բարձավ տասը լիր ցորեն:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ալի—ալիք
Դեղև—երերուն
Խցել—գոցել, փակել
Կագել—վիճել, կռվել
Կոնավոր—կոնաձև
Կքել—չոքել, ծալվել
Հալուն—հալչելու պատրաստ, հրահալելի
Հեշտակի—դյուրին, ցանկալի
Հեր—մակ
Հեցել—շրջանակել, պտտել
Ճաի—պատշաճ, հարմար
Մաճ—արորի կոթերը
Մարգարտահեռ—մարգարտահյուս
Միգապար—մեգով, մշուշով պարուրված
Շիջել—մարել, հանգցնել
Պալարել—ուռուցք կապել, ուռել
Ջեռալ—տաքանալ
Ջեր—տաք
Սարակ—բլրակ, կույտ
Վիմանալ—քարանալ, վեմ դառնալ

Տորոն-տորոն—երփներանգ
Յայգ—գիշեր, երեկոյից մինչև առավոտ ընկած ժամանակը
Յելել—պատռել
Յիր գալ—ցրվել
Փքել—ուռել, հպարտանալ, փքվել
Քրքում—անուշահոտ ծաղիկ
Օրան-օրան—կտրած, դիպած ցորենի պես

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3 . . . Կոմիտասը՝ բանաստեղծ—(Լ. Միրիջանյան)

Բնություն

17 . . . Կյանք
18 . . . Գարուն
19 . . . Նոճիներն ու մայրիներ
20 . . . Աշուն կյանք
21 . . . Սիրահասկ
22 . . . Աշուն օր
24 . . . Ծաղիկն ու շաղիկ
25 . . . Թերթիկն ու ցողիկ
26 . . . Աշուն
27 . . . Աշուն-գիշեր
28 . . . Երկնի կայծեր
29 . . . Սար ու քար
30 . . . Ձմեռնամուտ
31 . . . Ելավ տերև...
31 . . . Գարուն-ցելավ
32 . . . Հրդեհաբոց լեռներ՝ կոնելով

Սեր

35 . . . Ձերմակ հեր, գարուն սեր
36 . . . Հով ու ծով սեր
37 . . . Մենավոր
38 . . . Իմ երապում
39 . . . Քո երապում
40 . . . Վարդիկս
41 . . . Անմար սեր
42 . . . Ես սիրեցի անփուշ վարդ...

Խոհ

45 . . . Դիտակ
46 . . . Սալահատակն ու ուղին
47 . . . Աստվա՜ծ իմ
48 . . . Իբր վարդ
49 . . . Ճանապարհ
50 . . . Առաջ
51 . . . Բուսաբարև
54 . . . Ի՞նչ...
56 . . . Եղ ու սեր
57 . . . Խաչյալին
58 . . . Աղերս
59 . . . Փշուր մը
60 . . . Կարմիր ցայգով...
60 . . . Սերդդ անմիտ սրով...

Քնարերգ

63 . . . Կույրը
64 . . . Օրհնություն
65 . . . Սեր-հովիկ
66 . . . Սեր ու ջեր
68 . . . Սեր ու բեր
69 . . . Ոսկի-մեղաց
70 . . . Ուռի ցող
71 . . . Խորունկ ու մուգ
73 . . . Աղոթք
74 . . . Անուշ գարուն...
75 . . . Հով-սեր
76 . . . Շուշան սիրտ
77 . . . Պատրանք
78 . . . Բաղձանք
79 . . . Հոսուն-խոսուն
80 . . . Կարմիր բոց
81 . . . Ես եմ
82 . . . Այն ի՞նչ ամպ էր...
83 . . . Ծովակ, նավակ
84 . . . Գորով-սեր

Գյուղերգ

87 . . . Հունձ
88 . . . Մեր հայ գավառն է խավար...
90 . . . Ելավ շինական...
91 . . . Բառարան

ԿՈՄԻՏԱՍ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Է. Հ. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Բ. Հ. Քացախյան

Հանձնված է արտադրության 2/IX 1969 թ.:
Ստորագրված է տպագր. 9/X 1969 թ.:
Թուղթ՝ տպագր. № 1, 60×90¹/₃₂
տպագր. 3,0 մամ., հրատ. 1,6 մամ..
ՎՖ 08510, պատվեր 2922, տիրաժ 30 000,
գինը՝ 28 կ.:

«Հայաստան» հրատարակչություն,
Երևան—9, Տերյան 91:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի
մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆար-
դյունաբերության գլխավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Թումանյան փ.
№ 23/1:


Mateos Tsaretsi Bibliotheek
Amsterdam